**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

---

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Էլ. փոստ՝ minister@minfin.am

Հեռ.՝ (+374 60) 700 304, ֆաքս՝ (+374 60) 700 358
Վեբ կայք՝ www.minfin.am

01/82-5/20398-15
30.07.15

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ**
**ՊԱՐՈՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Գասպարյան**

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը ՀՀ կառավարության առընթեր ոստիկանության ս/թ հուլիսի 21-ի N 24/2087 գրությամբ ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հայտնում է հետևյալը.

Նախագծին կից ներկայացված N 6 հավելվածում ներառված 22451100/1 «Անձնագրեր» և 35121250/1 «Նույնականացման անվանաքարտեր» գնման առարկաները անհրաժեշտ է համապատասխանաբար փոխարինել 22451100/3 «Անձնագրեր» և 35121250/3 «Նույնականացման անվանաքարտեր» գնման առարկաներով:

**Հարգանքով՝**

**ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Jul 31 2015 12:32 PM +04:00

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 3340
«04» 08 2016

Կատ. Հ. Համամճյան
Հեռ. 011 (800-244)

ՀՀ Ոստիկանության Քարտուղարություն
Մտից Թիվ 5122
«03» 08 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389
Էլ. փոստ info@moj.am

19.08.2015 N 02/14/10112-15

Ձեր N ____________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Գասպարյան**

Ի պատասխան Ձեր 2015 թվականի օգոստոսի 6-ի 24/2289 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ... 3599 «20» 08 2015թ.

Կատարող՝ Անդրանիկ Ռաշիդյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 380-227

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 5518
«20» 08 2015թ.

Արդարադատության
Նախարարություն

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**

1. Որոշման նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նախագիծը համապատասխանում է հավասար և ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին:

3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն:

4. Իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարելու անհրաժեշտությունն առկա է:

5. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են:

6. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

7. Նախագծում օրենսդրական տեխնիկայի կանոնները պահպանված են:

**ՀՀ ԱՆ Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**